

**ԳԵՈՊԱՐԿԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ
ԻՆՈՎԱՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

Կ.Մ.ՍԱՐԱՖՅԱՆ

Գեոհամակարգը, լայն առումով, արհեստական և բնական փոխներագրող օբյեկտների բնատեխնիկական մի ամբողջություն է, որի կարևորագույն մասն են կազմում գեոպարկերը: Դրանք իրենց երկրաբանական կառուցվածքով եզակի տեղանք են, որտեղ կենտրոնացված են հազվագյուտ երկրաբանական երևույթներ և օբյեկտներ, և որոնք առանձնանում են կառուցվածքային, կազմվածքային, ծագումնաբանական և այլ յուրահատկություններով, ինչպես նաև գեղագիտական եզակի գրավչությամբ: Գեոպարկերի ազգային համակարգն էլ երկրի այդ տիպի տարածքների ամբողջությունն է, որը ներառում է լանդշաֆտային երկրաբանական եզակի բնական գոյացությունները, երկրաբանական բարդ տարբերակում ունեցող և բնաերկրաբանական դրսևորման բազմազանությամբ աչքի ընկնող երկրաբանական հուշարձանները և համալիրները:

Համապատասխան իրավական հիմքեր չլինելու պատճառով Հայաստանում կազմակերպված գեոպարկեր դեռևս չկան: Մինչդեռ աշխարհի զարգացած երկրներում գործում են բազմատեսակ, կազմակերպվածության բարձր մակարդակով հայտնի գեոպարկեր: Իսկ ՅՈՒՆԵՍԿՕ-ն ստեղծել է գեոպարկերի համաաշխարհային միասնական ցանց, որը միավորում է տարբեր երկրների բնական ժառանգության մաս կազմող գեոպարկերը:

Հաշվի առնելով Հայաստանում զբոսաշրջության զարգացման հեռանկարը, երկրի յուրահատուկ բնական միջավայրը, վերջինիս պատմական, բնապահպանական և կրթադաստիարակչական նշանակությունը՝ հույժ կարևոր է գեոպարկերի ստեղծման, դրանք միասնական ազգային ցանցի մեջ միավորելու ծրագրի մշակումը:

Հոդվածում փորձ է արվում ներկայացնելու տվյալ ոլորտի հիմնախնդիրները, դրանց կարևորությունը Հայաստանում զբո-

սաշրջության զարգացման և որակյալ զբոսաշրջային կրթության իրականացման գործում:

Հիմք ընդունելով հայկական բնաշխարհի բացառիկ հարուստությունը, բազմազանությունն ու բնական գրավչությունը՝ կարող ենք փաստել, որ այն գեոպարկերի ստեղծման աներևակայելի հարուստ միջավայր է: Այդ նպատակով դիտարկենք մի քանի կատար ուղղություններ՝ կապված հայկական լեռնաշխարհի հետ:

Հայկական լեռնաշխարհը հայտնի է հանգած հրաբուխներով (Հայաստանը հաճախ անվանում են հանգած հրաբուխների երկիր): Բարդ երկրաբանական պատմությամբ են բացատրվում օգտակար հանածոների բազմազանությունը, լեռնակազմական բարդ գործընթացները և վեց հարյուրից ավելի հրաբխային կոների առկայությունը:

Փոքր Կովկասի լեռնաշխարհը շատ տեղերում կտրտված է գետային կիրճերով և կանյոններով. Արաքս, Հրազդան, Դեբեդ, Աղստև, Որոտան, Ազատ, Արփա, Ողջի, Մեղրի, Չորագետ, Ախուրյան, Քասախ, Մարմարիկ և այլ գետերի հովիտներով անցնում են բազմաթիվ կիրճազնացային երթուղիներ: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում գետահովիտներում գտնվող հանքային և տաք ջրերը, կարստային քարանձավները և բնության բազմաթիվ երկրաբանական հուշարձաններ, որոնք սրփռված են Հայաստանի ողջ տարածքով՝ իրենց եզակիությամբ բնութագրելով հայկական լեռնաշխարհի երկրաբանական բազմազանությունը:

Ժամանակակից աերոտիեզերական թվայնացված քարտեզների շնորհիվ Հայաստանը մեր առջև հառնում է իբրև բարձրը լեռնային մի երկիր՝ բազմաթիվ միայնակ գագաթներով, լեռնաշղթաներով, լավային սարավանդներով, սարահարթերով, խորը կիրճերով, գետահովիտներով և հրաբխային ծագման բարձրավանդակներով: Վերջիններս իրենց երկրաբանական կառուցվածքով հայկական լեռնաշխարհի ամենագեղատեսիլ և բացառիկ հետաքրքրություն ներկայացնող տարածքներից են: Գրավիչ է նաև այն, որ «Հայաստանը գեղատեսիլ բնություն ունի և

հարուստ է հայ ժողովրդի նյութական մշակույթի բազմաթիվ հուշարձաններով» [1, 6]:

Հայաստանն զբոսաշրջության համար հարուստ ռեսուրսներ ունեցող երկիր է, որը պետական որոշակի նպատակային քաղաքականության արդյունքում կարող է վերածվել տարածաշրջանային կարևորություն ունեցող կենտրոնի:

Բնության ստեղծած եզակի հուշարձանները, երկրի պատմամշակութային գանձերը զբոսաշրջային ծրագրերի բացառիկ հետաքրքրության առարկա են:

Բնաճանաչողական երթուղիները զբոսաշրջության կարևորագույն ռեսուրսներից են: Դրանք նաև կարևոր դեր ունեն էկոլոգիական զբոսաշրջության ռեսուրսների պահպանության գործում: Ջրոսաշրջության այս ուղղությունը մեծապես նպաստում է մարդու կողմից բնության խելամիտ օգտագործման մշակույթի և անձի բնապահպանական նոր մտածելակերպի ձևավորմանը:

Բնական գոտիների և լանդշաֆտների բազմազանությունը հիմք է ծառայում էկոզբոսաշրջության տարբեր երթուղիների մշակման համար: Էկոզբոսաշրջության հանրապետական համալիրի ճիշտ կազմակերպման պարագայում այն կարող է վերածվել բնության պահպանության գործուն համակարգի: Այդ տեսակետից առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում մարդու տնտեսական գործունեության բացասական հետևանքներից զերծ տարածքները:

Այդ տիպի տարածքների շարքին են դասվում նաև Հայաստանի քարանձավները, որոնց մասին տեղեկություններն առաջիկայում կարելի է ի մի բերել և տալ «քարանձավային քաղաքակրթության» ամբողջական պատկերը [3, 3]:

Հայաստանն ունի հայկական լեռնաշխարհի ջրագրության բոլոր հատկանիշները, աչքի է ընկնում լեռնային երկրներին բնորոշ զարգացած, անհամասեռ և անհամաչափ ջրագրական ցանցով: ՀՀ-ում կա շուրջ 9480 գետ և գետակ, կենտրոնական մասում տեղակայված է Սևանա լիճը, կան նաև բազմաթիվ փոքր լճեր [2, 8]: Գետերի առկայությունը կիրճագնացության համար ապահովում է բազմազան ռեսուրսներ: Դրանք նաև

ջրվեժների, բազմաթիվ հանքային և ջերմային աղբյուրների գիտական ուսումնասիրություններ իրականացնելու կարևոր ոլորտ են: Դեռևս 1887-1975թթ. իրականացված բնախուզական ուսումնասիրությունները հետագայում հիմք հանդիսացան 1976-1996թթ. ավելի մանրակրկիտ ուսումնասիրությունների ժամանակակից երկրաբանական հանույթի ընդհանրացման գործընթացի համար [8, 9]: Հայոց աշխարհում հազարամյա գործունեության ընթացքում մարդն իր հետքն է թողել տարաբնույթ ժայռապատկերների ձևով [4, 17]: Չորրորդականի հրաբխականությունը, որը մեծ ուժգնությամբ գործել է մի քանի փուլերով, կարևոր դեր է ունեցել տարածաշրջանի ժամանակակից ռելիեֆի ձևավորման գործում: Ակնադիտական ուսումնասիրությունների համար մեծ արժեք է ներկայացնում Հայկական Պարի լեռների տարածքը՝ մեծ և փոքր Մասիս գագաթներով [5, 299]:

Հայկական լեռնաշխարհի տարածքում հրաբխային գործունեությունն ավարտվել է համեմատաբար վերջերս [6, 111]: Դա վերաբերում է հատկապես երկրաշարժերին և այլ արտածին վտանգավոր երկրաբանական աղետների, որոնց հետքերը կարող ենք նկատել ինչպես երկրի ռելիեֆի փոփոխությունների տեսքով, այնպես էլ մշակութային օբյեկտների վրա նրանց թողած հետքերով: Վերջիններս կարող են ներառվել գեոպարկերի համալիրում՝ որպես զբոսաշրջային օբյեկտներ: Դրանց շարքում առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Հայաստանի քարանձավները: Ստորերկրյա դատարկություններից ամենաչարագուշակները համարվել են վիհերը: Թեև մարդկանց հայտնի է Դանթեի դժոխքի՝ վիհի մուտքի մոտ գրվածը՝ «Ո՛վ մտնողներ, թողեք հույսը ձեր համայն» [7, 5], սակայն դա չի կարող խանգարել քարանձավագնացության սիրահարներին:

Հայաստանը պատմականորեն հայտնի է նաև որպես մետաղագործության կենտրոն՝ առավելապես իր սև և գունավոր մետաղների բազմաթիվ հանքավայրերով: Ուշագրավ են կերակրի աղի ստորգետնյա հանքավայրերը և բնագունեղ քարատեսակները, շինարարական հումքի հանքավայրերը: Հայաստանն աչքի է ընկնում ոսկու և արծաթի, ինչպես նաև հազվագյուտ

մետաղների հանքավայրերով, որոնց՝ հազարամյակների ընթացքում շահագործման ապացույցները մնացել են մինչև մեր օրերը [8,162]: Երկրաբանական այս բոլոր առանձնահատկությունները կարելի է միավորել գեոպարկերի տարբեր համակարգերի մեջ՝ հատկապես ընդգծելով դրանց բարձր լեռնային բլրնույթը և հորիզոնական մասնատվածությունը, որպես առանձնակի հատկանիշ՝ մասնավորապես նշելով լանջային ծանրահակ երևույթների դերը ռելիեֆառաջացման գործում: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում սակավաթիվ սառցադաշտային մորենները, և, վերջապես, ռելիեֆի էոլային ձևերը՝ որպես քամու ազդեցության հետևանք:

Ուշադրության են արժանի նաև չինգիլները, որոնք բազալտե, առանձին դեպքերում մեծ մակերեսային տարածում ունեցող քարակույտեր են: Բազալտի սյունաձև անջատումները լայն տարածում ունեն Հայաստանում: Դրանք առանձնանում են տեղադրման ու անջատման հարուստ ձևերով:

Ուսումնասիրելով երկրաբանական այս բոլոր յուրահատկությունները՝ հանգում ենք այն եզրակացության, որ Հայաստանին բնորոշ երկրաբանական բազմազանությունը որոշիչ դեր ունի գեոպարկերի ազգային ցանցի ձևավորման գործում:

Այս հարցում ուրույն տեղ ունեն երկրաբանական հուշարձանները, որոնք բնության անձեռակերտ բնական օբյեկտներ են, մոլորակի երկրաբանական պատմության հուշարձաններ: Դրանք պարունակում են գիտաճանաչողական մեծ արժեք ներկայացնող եզակի տեղեկություններ, աչքի են ընկնում առանձնահատուկ գեղեցկությամբ: Այդ տիպի հուշարձանները կարող են գտնվել ինչպես երկրի մակերեսին, այնպես էլ նրա ընդերքում:

Բնության երկրաբանական հուշարձաններ կան Հայաստանի բոլոր մարզերում: Դրանք բնաճանաչողական ներքին զբոսաշրջության հզոր ռեսուրսներ են, որոնք անհրաժեշտ է անփոփոխ պահպանել:

Գեոպարկերի ստեղծման ծրագրում գիտականորեն հիմնավորված նոր բնապահպանական տարածքների կազմակերպումն ու դրանց արդյունավետ օգտագործման հիմնահարցերը

պետք է կարևորել նաև ազգային և առաջին հերթին զբոսաշրջային կրթության զարգացմանը նպաստելու տեսանկյունից: Կրթական բարեփոխումներն իրականացվում են նոր մեթոդաբանությամբ՝ նոր գիտելիքների յուրացման հրամայականի պահանջներով: Առաջնային խնդիրներից է այդ մեթոդաբանությամբ աշխատելու քայլաշարի (ալգորիթմի) ուսուցումը: Ժամանակակից կրթական մեթոդների շարքում ուսուցման կազմակերպման կոլեկտիվ եղանակը ենթադրում է ուսումնական խմբի անդամների գործակցության վրա հիմնված ուսումնական պարապմունքներ [9, 53], որոնք կարող են կազմակերպվել նաև գեոպարկերում՝ բնական միջավայրում: Պարապմունքներն անցկացվում են ուսումնական թեմաների անհատական բաշխման սկզբունքով: Հաստատելով ուսանողի կողմից թեմայի ընկալման բավարար մակարդակը՝ արդեն կարող են անցնել թեմաների փոխհաղորդման մեթոդաբանության կիրառմանը:

Կարևոր է նաև բնական հուշարձանների, ինչպես նաև տվյալ տարածքի վերաբերյալ գիտելիքների ստուգումը: Այս մեթոդաբանության կիրառման համար կարևոր նշանակություն ունի բնական հուշարձանների հետ ուսանողների անմիջական, անհատական շփման իրական հնարավորությունը: Ուսանողը կարողանում է իրապես ստուգել ստացած տեսական գիտելիքները և դրանք հարստացնել փաստացի նյութերի հիման վրա: Եվ պատահական չէ, որ այս մոտեցումն անվանում են կոլեկտիվ ուսուցման բնաճանաչողական իրադարձային մեթոդ:

Գեոպարկերը հնարավորություն են ընձեռում նաև բնական միջավայրում կազմակերպելու ուսումնական գործընթացների համար գործնական նշանակություն ունեցող որոշակի ուղղվածության՝ նպատակային հատուկ դասընթացներ: Այս գործում անգնահատելի դեր ունի բնաճանաչողական բնույթի արշավների կազմակերպումը: Արշավների կազմակերպման ծրագրում բազմակողմանիորեն հիմնավորվում է տարածքի ընտրությունը՝ պայմանավորելով այն ուսումնական, ինչպես նաև զբոսաշրջային խնդիրներով, հաշվի առնելով մասնակիցների հետաքրքրություններն ու հակումները, նրանց կամային հատկա-

միջներն ու ֆիզիկական պատրաստվածությունը, անհատական կենսափորձն ու արշավի մասնակցության հմտությունները: Արշավը բնության հարուստ պատկերացումներ է տալիս մարդուն և զարգացնում նրա ներաշխարհը: Մարդը, շփվելով բնության հետ, կարողանում է ներթափանցել նաև իր հոգու խորքերը՝ հասնելով ինքնաճանաչման մի յուրահատուկ զգացողության:

Ջրոսաշրջային ինովացիոն ծրագրերում կարևորվում է նաև գիտական ու մշակութային զբոսաշրջության կազմակերպումը: Համաշխարհային զբոսաշրջային կազմակերպության բնորոշմամբ՝ գիտական և մշակութային զբոսաշրջությունը նրպատակ ունի անմիջականորեն ճանաչելու գիտական նվաճումները, պատմական հուշարձանները և այդ տեսանկյունից կարևոր արժեք ներկայացնող նոր վայրերի հայտնաբերումը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ Ստոկհոլմում 1998թ. կազմակերպած համաժողովում գիտատրոնոդական զբոսաշրջային գործունեությունը և գիտամշակութային զբոսաշրջությունը ձևակերպվեցին որպես առաջնային նշանակության ուղղություններ:

Գիտական զբոսաշրջության ռազմավարություն մշակելիս պետք է ելնել «գիտություն-կրթություն-մշակույթ» համակարգի միասնականության սկզբունքից: Նշված համակարգի տարրերից յուրաքանչյուրն իր դերն ունի զբոսաշրջության զարգացման մեջ և կոչված է ծառայելու էկոլոգիական զբոսաշրջության նոր ճյուղերի ձևավորմանը, դեպի բնություն նոր երթուղիների մշակմանն ու յուրացմանը, ազգային պարկերի, այդ թվում՝ գեոպարկերի ստեղծմանն ու զարգացմանը:

Մշակութային զբոսաշրջության ծրագրերում առանձնահատուկ նշանակություն պետք է տալ ազգային առանձնահատկությունների, ավանդական արհեստների, արվեստների, ազգային ավանդույթների պահպանմանն ուղղված միջոցառումների իրականացմանը:

Վերջին տարիներին մի շարք երկրներում ստեղծվել են մշտական գործող հենակետային կայաններ, ինչպես նաև գիտական կայանների ցանցեր: Կայանները լինում են տարբեր ուղղվածության՝ երկրաբանական, հրաբխագիտական, օդ-

երևութաբանական, լեռնային, անտառային, էկոլոգիական և այլն:

Հայաստանում գեոպարկերի միասնական համակարգի ստեղծումը կնպաստի էկոզբոսաշրջային նոր ուղղությունների զարգացմանը, խթան կհանդիսանա ներքին զբոսաշրջության զարգացման համար և զբոսաշրջիկների միջոցով կնպաստի ազգային գիտության ժողովրդականացմանը: Այս հարցում կարևոր դեր են կատարում գիտական արշավները, որոնք մերօրյա զբոսաշրջության նորամուծություններից են:

Գիտական զբոսաշրջությունը պետական, ակադեմիական, սոցիալական և անհատական ծրագրերի միջոցով կարող է լավագույնս զուգակցվել սոցիալական, էկոլոգիական, սպորտային, արկածային, ինսենթիվ և զբոսաշրջային այլ ուղղությունների հետ՝ հնարավորություն ընձեռելով հանրաճանաչ գիտնականների միջոցով անմիջականորեն հաղորդակցվելու գիտության գաղտնիքներին:

Հայաստանի համար էկոլոգիական զբոսաշրջության ուղղություններից հեռանկարային կարող են լինել լեռնագնացությունը, գեոզբոսաշրջությունը, քարանձավագնացությունը, ժայռագնացությունը, կիրճագնացությունը, հնէաբանական, գեոէկոլոգիական զբոսաշրջությունը և այլն:

Գիտական զբոսաշրջությամբ հետաքրքրված զբոսաշրջիկները հաճույքով կարող են կրել նաև արշավախմբի ֆինանսական ծախսերի մի մասը, մատուցել անվճար ծառայություններ, ինչպես նաև ցանկություն հայտնել որպես օժանդակ աշխատողներ մասնակցելու գիտահետազոտական աշխատանքներին՝ նպատակ ունենալով իրենց աչքերով տեսնելու գիտական կայանները, ծանոթանալու դրանց աշխատանքներին: Գիտական զբոսաշրջության կազմակերպումը որոշակի դեր ունի նաև գեոպարկերի գիտական ուսումնասիրությունների գործում:

Գեոպարկերի ստեղծումը պայմանավորված է նաև զբոսաշրջիկների մեջ բնապահպանական մտածելակերպ ձևավորելու անհրաժեշտությամբ, ինչը հնարավորություն կտա նաև

խորացնելու գրոսաշրջիկների իրազեկվածությունը էկոգրոսաշրջության ոլորտում: Միայն իրազեկված գրոսաշրջիկը կարող է առանց վնասելու հաղորդակցվել բնական հուշարձանների հետ՝ խորապես գիտակցելով վերջիններիս դերը մարդկանց բնաճանաչողական գիտելիքների զարգացման և դրանք՝ սերունդներին անվնաս փոխանցելու կարևոր գործում:

Բնաճանաչողական գրոսաշրջությունը ժամանակակից հասարակության ընդհանուր մշակույթի բաղադրիչ է: Միայն բնական հարստությունների նկատմամբ մշտական հոգատար վերաբերմունքով կարելի է գնահատել մարդկանց ընդհանուր զարգացածության իրական աստիճանը: Հետևաբար՝ գեոպարկերի գիտականորեն հիմնավորված ազգային միասնական համակարգի ստեղծումը Հայաստանի կայուն զարգացման կարևոր երաշխիքներից է: Երկրաբանական եզակի հուշարձանների՝ նոր ձևավորվող համակարգն էլ մոտ ապագայում ամուր հիմք կարող է դառնալ Հայաստանի գեոպարկերի ազգային համակարգի ստեղծման համար:

Բնության երկրաբանական հուշարձանների միավորումը գեոպարկերի մեջ և գեոպարկերի ազգային համակարգի ստեղծումը նշանակալի ներդրում կունենա Հայաստանում գրոսաշրջության, և հատկապես էկոգրոսաշրջության զարգացման գործում, ինչը, անկասկած, կնպաստի նաև մարդկանց բնապահպանական նոր մտածելակերպի ձևավորմանն ու զարգացմանը:

Առանցքային հասկացություններ. *գեոպարկ, գեոպարկերի ազգային համակարգ, էկոգրոսաշրջություն, կոլեկտիվ ուսուցման բնաճանաչողական իրադարձային մեթոդ, բնության երկրաբանական հուշարձաններ, էկոլոգիական մտածելակերպ:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա. Խ. Ավանեսյան, Է. Գ. Մալխասյան, Ս. Ն. Նազարեթյան, Հայաստանի երկրաբանական եզակի հուշարձանները, Երեվան, «Մուսալեռ» ՍՊԸ, 2000, -159 էջ:

2. **Ա. Մ. Գասպարյան**, Գ. Ս. Պողոսյան, Լ. Ա. Հակոբյան, Վ.Ն. Մինասյան, Հայաստանի Հանրապետության ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և պահպանման հիմնախնդիրներ, Երևան, «Եգեա», 2007, -102 էջ:
3. **Ս. Մ. Շահինյան**, Հայաստանի քաչանձավները, Գիրք Ա, Երեվան, «Չանգակ», 2005,-170 էջ:
4. **Ս. Պետրոսյան**, Հայկական ժայռապատկերներ, Երևան, «Եգեա», 2005, -243 էջ:
5. **Ա. Տ. Վեհունի**, Մեծ մերձավոր արևելքի երկրաբանությունը և ընդերքի հարստությունները, Երևան, «Ռսկան Երևանցի» հրատարակչություն, 2008, - 443 էջ:
6. **Կ. Մ. Սարաֆյան**, Տարերաբանություն, Երևան, «Վարդհրատ», 2008, -231 էջ:
7. **Է. Սարգսյան**, Քարանձավները բացում են իրենց գաղտնիքները, Երևան, «Հայաստան», 1989, - 280 էջ:
8. **Ռ. Ա. Առաքելյան**, Է. Գ. Մալիապյան, Ս. Ս. Սկրտչյան, Կ.Ն. Պաֆֆենհոլց,Կ.Գ. Շահնուրադով, Հայկական ՍՍՀ Երկրաբանական ակնարկ, Երևան, ՀՍՍՀ ԳԱԱ, 1975, -174 էջ:
- 9.**Մ. Ա. Սկրտչյան**,Կրթության կազմակերպման կոլեկտիվ եղանակի կայացման հիմնահարցերը, Երևան, ԵՊՀ, 2001, -119 էջ:

К. М. САРАФЯН

ПРОБЛЕМЫ РАЗРАБОТКИ ТУРИСТИЧЕСКИХ ИННОВАЦИОННЫХ ПРОГРАММ ПО СОЗДАНИЮ ГЕОПАРКОВ В АРМЕНИИ

Резюме

В статье анализируются проблемы разработки программ создания геопарков и их роль в развитии туризма в Армении, характеризуются разные аспекты экосреды с точки зрения создания геопарков, раскрываются объективные предпосылки и основные направления реального осуществления туристических инновационных программ. Автор рассматривает также проблему создания национальной системы геопарков, влияние этого

процесса на реформирование туробразования в РА, особо подчеркивает их роль как важного фактора формирования экологического, природоохранного мышления и культуры личности человека, в частности туриста.

Создание геопарков в Армении будет способствовать ее интеграции в мировую систему геопарков, которая представит республику более привлекательной в плане туризма.

Ключевые понятия: *геопарк, национальная система геопарков, аэрокосмическое картирование, геологические памятники природы, экологическое мышление.*

K.M. SARAFYAN

ISSUES ON THE DEVELOPMENT OF THE TOURIST INNOVATIVE PROGRAMS FOR CREATING GEOPARKS IN ARMENIA

Summary

The present article analyses the issues of the project development aimed at creating geoparks in the RA and the role they might have in the process of tourism development in the country. A special attention is given to various aspects of ecosphere connected with the creation of geoparks together with revealing prerequisites and general trends in realization of the tourism innovative programs. The author also gives his consideration to how the geoparks might contribute to the reforms in tourism education in the RA specifying the role of the geoparks in making environment-protecting and ecologically oriented way of thinking with the tourists.

Creating geoparks in Armenia will definitely contribute to the process of the country's integration into the system of geoparks which, in its turn, will make the Republic more attractive as a tourist destination.

Key concepts: *National Geopark System, training and educational tours, geological monuments of nature, aerospace mapping, ecological thinking.*